ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ ԴԵՊԻ ԱՌԱՎԵԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՄՈՏԵՑՈՒՄ

Ցեղասպանության ճանաչման դրական լուծման համար Փոխհատուցման հետապնդումը կարելի է իրականացնել միջազգային մակարդակով, ինչպես նաեւ Թուրքիայում: Ռազմավարությունը ունի 3 տարբեր միջոցներ՝ իրազեկման կառույց, քաղաքական ճնշում եւ իրավական գործողություն: 1970-ականներից սկսած, մենք աստիճանաբար կառուցել ենք մեր պայքարի առաջին երկու միջոցները: Այժմ կառուցում ենք միասնական ռազմավարություն երրորդ միջոցի համար, այն է՝ իրավական գործողությունը:

Իրազեկման կառույց - Թիրախը եղել է հայկական զանգվածը Սփյուռքում եւ առավել քիչ չափով Հայաստանի Հանրապետությունում: Մենք շարունակում ենք աշխատել մոբիլիզացնելով լրատվամիջոցները, քաղաքացիական հասարակությանը եւ միջազգային հանրության ավելի ու ավելի շատ հասարակական կազմակերպությունների:

Քաղաքական ճնշում - քաղաքական ճնշումը եւ լոբբինգը կարեւոր նշանակություն ունեն մեր հաջողության համար, բայց մենք պետք է պնդենք եւ ընդգծենք, որ բոլոր երկրները հիմնում են իրենց որոշումները իրենց իսկ սեփական ազգային շահերի վրա եւ ոչ հայկական շահերի: Մենք պետք է ուշադիր լինենք իրենց մոտիվների նկատմամբ: Այնուհանդերձ, կառավարությունների քաղաքական կամքը եւ աշխարհաքաղաքական փոփոխությունները Թուրքիայում եւ նրա շուրջ առանցքային նշանակություն ունեն մեր հաջողության համար: ԱՄՆ Ներկայացուցիչների Պալատի Բանաձեւ 306-ը եւ 2011թ. Ֆրանսիայի ցեղասպանության մասին օրինագիծը քաղաքական ճնշման որոշակի օրինակներ են հանդիսանում (հիմնականում՝ լոբբինգի), ըստ որոնց հայերը շահեցին եւ կարողացան հասնել մասնակի հաջողությունների: Ինչ վերաբերում է Թուրքիայի ներգրավվածությանը Սիրիայի արագ զարգացող ճգնաժամի հարցում, ապա այն աշխարհաքաղաքական փոփոխության օրինակ է, որը գուցե Թուրքիային կանգնեցնի շախմատային պատի առջև, որին մենք՝ հայերս, պետք է կարողանանք լավ նախապատրաստվել և դրանից օգուտ քաղել:

Դատաիրավական պահանջ - Սա նոր ռազմավարության անկյունաքարն է: **ճանապարհային քարտեզը**, որը մեզ դատաիրավական ճանապարհով կտանի դեպի արդարության հաղթանակ, 2 ուղղությունների վրա հիմնված մոտեցում է: Այն է՝ միջազգային ճնշում Թուրքիայի վրա և Թուրքիայի ներքին քաղաքական խոցելի կետերի օգտագործում:

Միջազգային ճնշում Թուրքիայի վրա:

Քաղաքական իրազեկության եւ քաղաքական ճնշման վերջնական արդյունքը կլինի ընդդեմ Թուրքիայի կառավարության դատական հայց ներկայացնելը: Դատական հայց ներկայացնելու համար կատարվում են հետևյալ հստակեցումները:

- Անարդարության հստակ բնութագրում: Արդյոք անարդարությունը ունի՞ իրավական սկզբունք: Պատմական եւ բարոյական իրավական ուժը այստեղ նույնիսկ քննարկման ենթակա չէ:

- Դատական ֆորումի պարզաբանումը: Միջազգայինն ընդդեմ թուրքական ֆորումի՞: Արդյոք դա Արդարադատության միջազգային դատարա՞նն է (ՄԱԿ), թե՞ Միջազգային քրեական դատարանը: Մարդու իրավունքների եվրոպական դատարա՞նը, թե՞ ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովը (որպես խորհրդակցական կարծիք): Թուրքական դատարաննե՞րը, թե՞ Թուրքիայի ներքին օրենսդրությունը: Նշենք, որ անհատական պահանջների հայցերով կարելի է իհարկե դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան, մինչդեռ պետությունների միջեւ հողի պահանջները վերջնական լուծում են ստանում պետությունների միջեւ Արդարադատության միջազգային դատարանի միջոցով:

- Ո՞վ է հայցվորը: Սփյուռքի որևէ հանձնաժողո՞վ, Ստամբուլի պատրիարքարա՞նը, Կիլիկիայի Կաթողիկոսարա՞նը: Հայաստանի Հանրապետությո՞ւնը: Նաեւ նշենք, որ, տարբեր հայցվորներ կարող են միաժամանակ ներկայացնել տարբեր բողոքներ:

- Գոյություն ունի՞ արդյոք կառավարությունների բավարար չափով քաղաքական կամքի դրսևորում (գերտերությունները ներառյալ), եւ գոյություն ունի արդյոք քաղաքացիական հասարակության համախմբում:

- Արդյոք հայցի համար պահանջվո՞ւմ է միջնորդություն, եւ, եթե այո, ապա ում կողմից:

Հաշվի առնելով ներկա քաղաքական լանդշաֆթը և աշխարհաքաղաքական շահերը, սա ամենևին էլ հեշտ խնդիր չէ: Որևէ բանաձևի վերաբերյալ ճանապարհային քարտեզ կազմելիս անհրաժեշտ է, որ հայկական կողմը համակարգի իր տարբեր շահագրգիռ կողմերի, խմբերի գործողությունները, որոնք կարող են իրավական հայց ներկայացնել անարդարության եւ գույքի պահանջի վերաբերյալ: Հետեւյալ սուբյեկտները իրենց գույքի հանդեպ ունեն պատմական իրավունք:

- Ստամբուլի Պատրիարքություն
- Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսություն
- Էջմիածնի Կաթողիկոսություն
- Սփյուռքահայ մարմին, որը հավաքական պահանջ է ներկայացնում կորստի մատնված անձնական գույքի նկատմամբ (խմբակային փոխհատուցում)
- Եվ իհարկե, Հայաստանի կառավարությունը եւ իր պահանջները

Հարկ է ընդգծել կրկին, որ, երբ խոսքը վերաբերում է միջազգային իրավունքին, ապա ցեղասպանության հետևանքով կորստի մատնված հայապատկան գույքի նկատմամբ պահանջատիրության ռազմավարությունը էականորեն տարբերվում է Թուրքիայի և ներկայիս Հայաստանի Հանրապետության միջև հողի եւ սահմանների համապարփակ քննարկման ռազմավարությունից:

Կարծիք կա նաև, որ գոյություն ունի հայցի 2 տեսակ եւ երկու դատական մոտեցում՝ խմբակային փոխհատուցման պահանջ եւ անհատական փոխհատուցման պահանջ: Ահա որոշ օրինակներ հայցերի միջոցով ներկա և հեռանկարային դատական գործերի, որոնք ներկայացնում են Հայ ժողովրդի իրավունքներն ընդդեմ Թուրքիայի Հանրապետության:

- Անհատական փոխհատուցման դատական գործի օրինակներ - Հայոց ցեղասպանության հետ կապված ապահովագրության պահանջի խմբակային հայց /class action suit/: CA 9th Circuit գործը Մովսեսյանն ընդդեմ Versicherung AG-ի: Սրանից բացի, շատ անհատ հայեր ունեն իրենց հին գույքերի կադաստրային պատճենները, եւ ոմանք առանձին դիմումներ են հղում Թուրքիայի կառավարությանը:
- Փոխհատուցման խմբակային դատական գործերի օրինակներ- Կոստանտինապոլիսի պատրիարքարանի կողմից Ցեղասպանության հետևանքով առգրավված գույքի վերաբերյալ դատական հայցեր: Հեռանկարային հայց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի կողմից՝ 1915թ. առգրավված հայկապատկան գույքի վերադարձի հետ կապված: Հեռանկարային Իրավական պահանջ Հայաստանի Հանրապետության կողմից:

Անհրաժեշտ է ընդգծել հետևյալը: Դատական հայցերի միջոցով անհատական փոխհատուցումները չեն կարող բավարարել Ցեղասպանության ճանաչմանը հասնելու մեր ազգային հետապնդումը: Միայն խմբակային հատուցման դատական հայցերն են, որ պետք է ներառվեն Փոխհատուցման հարթություն: Նշված հայցերից և ոչ մեկը չի ներկայացվել Ցեղասպանության բանաձևի համապարփակ համատեքստում: Հայկական կողմը լավ հասկանում է, որ առավել ընդհանրական պատկերում Թուրքիան կարող է ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառել փոքր զիջումներ՝ ի վնաս հայկական ավելի մեծ իրավունքի:

Այլընտրանքային, սակայն, լրացնող ռազմավարական մոտեցում -Առավել կենտրոնացում թուրքական քաղաքականության ու հասարակության վրա

Անհրաժեշտ է օգտագործել նաև այն ներքին խոցելի կետերը, որից ներկայումս տուժում է Թուրքիան, եւ նման ռազմավարությունները ևս վերլուծության են ենթարկվում:

- **ԵՄ եւ Թուրքիա** - Եվրամիության քաղաքական որոշ գործիչներ, ովքեր քաղաքականապես զգայուն են Հայոց ցեղասպանության հարցի նկատմամբ, հիմնականում իրենց սեփական ազգային շահերից ելնելով, Թուրքիայի վրա ճնշում են բանեցնում պաշտոնապես ճանաչելու Հայոց ցեղասպանությունը որպես ԵՄ - ին անդամակցության նախապայման:
- **Հրանտ Դինքի ռազմավարությունը** - Նրա ռազմավարության էությունը կայանում էր ներսից թուրք հասարակության վերափոխման մեջ, եւ այդ ռազմավարության կենտրոնը եւ թիրախը Թուրքիայի քաղաքացին է: Դինքը գործնականում ստիպում էր թուրքերին քննարկել Հայոց ցեղասպանությունը: Այնուամենայնիվ, Դինքը նաև որոշակի քննադատությամբ էր մոտենում հայկական սփյուռքին, որն այդքան համառորեն կիրարկում էր Ցեղասպանության պահանջը առանց նրանում ներգրավելու ժամանակակից թուրք ժողովրդին: Ներկայումս Թուրքիայում ընթացող այդ փոփոխությունները շարունակելը եւ դրանից օգուտ քաղելը արժանի է ռազմավարական առավել մեծ ուշադրության:

- **Թուրքիայի ներքին օրենսդրական ռազմավարությունը** – Թուրքիայում կա առնվազն 100,000 մահմեդական համշենահայ, մոտ մեկ միլիոն հայ, ովքեր բռնի մահմեդականացվել են իրենց կյանքի փրկության համար, 20 միլիոն քուրդ եւ Թուրքիայից բազմաթիվ հիասթափվածներ, ովքեր իրենցից քաղաքական վտանգ են ներկայացնում թուրքական կառավարության համար: Թուրքիայի ներքին խոցելիության օգտագործումը, որից նա շարունակաբար տուժում է այսօր, շատ կարեւոր է եւ արժանի ամբողջական քննարկման: Մենք պետք է նպատակ հետապնդենք բավական դրական տրամադրություն ստեղծել Թուրքիայում, որպեսզի Թուրքիայի խորհրդարանը սկսի զբաղվել թուրքական հայանպաստ օրենքներ ընդունելով: Սա, իհարկե մեծ ցանկություն է, սակայն ժամանակի ընթացքում գուցե ավելի լավ հարաբերություններ հաստատելու կարիք զգացվի Թուրքիայի ներսում համշենահայերի, մահմեդական հայերի, ինչպես նաեւ քրդերի եւ ալեվիտների հետ: Թուրքիայի մասնակցությունը Սիրիայի հարցում թերեւս կարող է նոր դուռ բացել:

Մենք պետք է կրկին անգամ ընդգծենք, թե որքան կարեւոր է մեզ համար վերաձեւել մեր քաղաքական միտքը, եւ գիտակցել, որ մենք՝ հայերս, պետք է շատ ավելի

ակտիվորեն հետապնդենք Թուրքիայի ներքին մարտահրավերներն ու հակասություններն օգտագործելու ռազմավարությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ-ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՐԱ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ, ԴԱՏԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՇՆՈՐՀՈՂ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական իրավունքների պաշտպանության ամենահարմար ճանապարհային քարտեզը առաջիկա 10 տարիների համար բազմաճյուղ մոտեցումն է ռազմավարական առաջնահերթության հետ միասին:

Ա.Հայ ժողովրդի հարատև կենսունակությունը համահայկական տեսանկյունից դիտարկելու հարցում գոյություն ունի կոնսենսուս, և, դրանով հանդերձ, նաև գոյություն ունի համակարգված քաղաքականություն, որն ուղղված է այսօրվա Հայաստանի Հանրապետության անմիջական խնդիրները, անցյալի անարդարությունները, եւ սփյուռքի ու հայրենիքի կենսունակության խնդիրները լուծելու նպատակին, այն քաջ գիտակցությամբ նաեւ, թե ինչպիսի ռազմավարական անհրաժեշտություն է հզոր Հայաստանի Հանրապետություն ունենալը: Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից, վերաձևված, առավել քիչ ֆեոդալական միտվածություն ունեցող կառավարման հիմնումը, հայ հասարակության բոլոր շերտերին նպաստող սոցիալ-տնտեսական բարելավումը, ամենաբնական և բարենպաստ անհրաժեշտություններն են: Հայերի մեծ մասը նաև կարծում է, որ Հայաստանի պետության փոփոխված արտաքին քաղաքականությունը, Լեռնային Ղարաբաղի հակամարտության «մադրիդյան սկզբունքներ» -ից եւ ԵԱՀԿ Մինսկի խմբից դուրս ռազմավարական մոտեցումը կարող են նոր հիմք ստեղծել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կարգավիճակի եւ անվտանգության տևական կարգավորման համար:
Բ. Ինչ վերաբերում է Ցեղասպանության 100-ամյակին, ապա պետք է նշել, որ այն մեկ անգամ տրվող հնարավորություն է, որը չի կարող լինել կրկնությունը այն ամենի, ինչ անհաշիվ անգամներ եղել է անցյալում, այսինքն, սահմանափակվել երթերով և դրա ճանաչմանը ուղղված համերաշխ արտասանությամբ: Ցեղասպանության անարդարության հարցը բազմաշերտ է, եւ դրա լուծմանը հետամուտ լինելը բարդ եւ բազմաձավալ խնդիր է: Այն պահանջում է նուրբ մոտեցում:

1.Այս վերջին մի քանի տարիներին որոշակի շարժ է տեղի ունեցել մեր քաղաքական դատողության մեջ, եւ այժմ առաջարկվում է հետամուտ լինել Փոխհատուցման հարցին, այն համաձայնեցնելով Հայոց ցեղասպանության ճանաչման կանոնավոր գործընթացի հետ: Մենք պնդում ենք, որ Հայոց ցեղասպանության ճանաչումն այլեւս չի դիտվում որպես վերջնական նպատակ, և որ, ըստ էության, Փոխհատուցմանը վերաբերող գործընթացը կարող է խթան հանդիսանալ Հայոց ցեղասպանության ճանաչման համար, եւ, որ այս պատմական անարդարության հարցը ունի

արդիական կարևորություն հայ-թուրքական միջպետական հարաբերությունների համար: Եթե մի կողմ թողնեինք սահմաններին վերաբերող բարդ խնդիրը, ապա ինչպիսի՞ն կարող էին լինել հայ-թուրքական հարաբերությունները (պետությունը պետության հետ), եթե Թուրքիան այլեւս չմեղանչող ագրեսոր չլիներ, այլ պարզապես Ցեղասպանության պատճառով դժվար իրավիճակի մեջ հայտնված պետություն:

2.Ցեղասպանությունը ունի երկու հիմնահարց, երկու տարբեր մակարդակների անարդարություն, մասնավորապես, Ցեղասպանության անարդարության դեմ մղվող պայքարը, և նաև՝ կորցրած հայկական հողերի համար մղվող պայքարը: Թեև իրար ամբողջացնող, այդ երկու հիմնահարցերը բարձրաձայնելու նպատակները եւ ռազմավարությունները տարբեր են:

3.Երկու հիմնահարցերից առաջինը շարունակաբար արգելքի է հանդիպում Թուրքիայի պետության կողմից, որը ոչ այլ ինչ է, քան ճշմարտությունը բարձրաձայնելու արգելք: Այն բաղկացած է հայ ժողովրդի Հայոց ցեղասպանության ճանաչման համար մղվող պայքարից, հայապատկան հաստատությունների գույքի փոխհատուցման համար պայքարից, ինչպես նաեւ իրենց կյանքը և ունեցվածքը 1915-1923թթ. Հայոց ցեղասպանության ժամանակ կորցրած հայ ժառանգներին պատկանող գույքի համար պայքարից: Այս առումով, դատական ճակատը պետք է ռազմավարական շատ ավելի ակնհայտ հիմնավորվածություն ձեռք բերի:

4.Երկրորդ հարցը համապատասխան /բավարարող/ իրավական բանաձևն է Ցեղասպանության հետևանքով կորցրած հայկական հողերի հետ կապված, ինչպես նաև Կարսի պայմանագրի վերաբերյալ, այլ կերպ ասած՝ հայ-թուրքական սահմանների գծագրումը: Վերջինս շատ ավելի բարդ գործընթաց է, եւ նրա իրավական հիմքի նախապատրաստումը կարող է ավելի երկար ժամանակ պահանջել: Մենք ունենք պատմական իրավունքներ, սակայն այս քայլի հաջողությունը իր էության մեջ կապված է քաղաքականապես հզոր Հայաստանի Հանրապետություն ունենալու հետ: Սա ևս մեկ անգամ շեշտում և հաստատում է մեր վերոհիշյալ տեսությունը, որ հայ ազգի կենսունակության համար անհրաժեշտ բոլոր 3 նպատակները ինտուիտիվ կերպով կապված են նույն շղթայով, և, այնուհանդերձ, դրանցից ամենակարեւորը ակնհայտորեն ուժեղ հայկական պետության կայունությունն է:

5.Ցեղասպանության բանաձեւի դատական օրակարգը սկսված է: Ստամբուլի Պատրիարքությունը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանը[1] արդեն նախաձեռնել են այս գործընթացը:

[1]Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը, «Հայոց ցեղասպանություն. Ճանաչումից մինչև Փոխհատուցում», - Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարան, Անթիլիաս, Լիբանան, փետր. 23-25, 2012, փետրվարի 25:

6.Այլընտրանքային եւ կոմպլեմենտար ռազմավարական մոտեցումները, որոնք փորձում են օգտագործել ներկայիս Թուրքիային անհանգստացնող ներքին խոցելի կետերը, պետք է գնահատել որպես մեր քաղաքական դիսկուրսի մեկ մաս: Դրանց պետք է հետապնդել ավելի մեծ ջանք ու համոզմունք ներդնելով:

7. Մենք նաեւ հասկացել ենք, որ սփյուռքի կազմակերպությունների ռեսուրսների եւ մարդկային ներուժի հետ միասին, մենք պետք է օգտագործենք ոլորտի հայ եւ այլազգի պրոֆեսիոնալ մասնագետների փորձը, ովքեր կարող են օգնել ձեւակերպումների հարցում, ինչպես նաեւ իրականացնել նախաձեռնություններ, որոնք անհրաժեշտ են մեր նպատակներին հասնելու համար: Հանրային քաղաքականության և միջազգային իրավունքի ոլորտում հայ համապատասխան կադրերի նախապատրաստումը սկսվել է, սակայն նաև լրացուցիչ կարիք կա նման, տարբեր երկրների քաղաքացի նվիրյալ հայերի, հանրային քաղաքականության մեջ ներգրավվելու համար, ինչպես նաև այլոց՝ միջազգային իրավունքի մասնագետներ դառնալու համար:

ՄՈՏԱԼՈՒՏ ԱՊԱԳԱՅԻ ՕՐԱԿԱՐԳ

1970-ականներից սկսած, հայ ժողովուրդը մեծ առաջընթաց է ձեռք բերել, սակայն Թուրքիայի կողմից Ցեղասպանությունը մերժող ջանքերն ու նրա ագրեսիվ դիվանագիտական ազդեցությունը սպառնալի մարտահրավեր է մեզ համար: Մենք պետք է ավելի կենտրոնացած և ստեղծագործական լինենք անարդարությունը վերացնելու հետամուտ մեր ճանապարհին:

Հնարավորինս հաջող օրակարգ ունենալու համար, մեզ անհրաժեշտ է բավարարել երկու նախապայման:

1. Հայաստանի կառավարության վճռորոշ դերն ու մասնակցությունը մեր ազգային նպատակների օրակարգին հետամուտ լինելու հարցում: Առավել գործուն ճանապարհային քարտեզ ստեղծելու համար անհրաժեշտ է, որ Հայաստանի կառավարությունը առաջնորդի դեր ստանձնի վերը նշված ազգային նպատակների սեփականատիրոջ իրավունքով, անցնելով խորհրդանշական միջոցառումներից այն կողմ: Սա եւս մեկ անգամ ընդգծում է, թե որքան կարեւոր է հանրապետության կենսունակությունը եւ կայունությունը, մի բան, որ մարտահրավեր է համարվում այսօր: Հայոց ցեղասպանության եւ հայ ժողովրդի իրավունքների վերաբերյալ հստակ դիրքորոշումը և նոր ռազմավարությունը, որը համահունչ է իր արտաքին քաղաքականությանը, շուտով ակնկալվելու է Հայաստանի Հանրապետության կառավարությունից: Հայաստանի կառավարության առավել ուշագրավ ռազմավարությունների, ինչպես նաև սփյուռքի նման ռազմավարությունների միջև

առավել մերձեցնող համակարգում է անհրաժեշտ իրականացնել: Ցեղասպանության հարյուրամյակի հանձնաժողովի ստեղծումը չի կարող բավարարել նման պահանջը:

2. Սփյուռքի եւ հայ ժողովրդի շահերը ներկայացնող իրավական մարմնի հստակեցումը: Այս գաղափարը նոր չէ, սակայն քաղաքական եւ ռազմավարական տեսանկյունից էական նշանակություն ունի: Փոխհատուցում ստանալու համար հայ ժողովուրդը պետք է կամ բանակցի Թուրքիայի Հանրապետության հետ կամ պահանջ (ներ) ներկայացնի Միջազգային կամ թուրքական դատարանին: Ցանկացած դեպքում հայկական կողմը պետք է հստակ եւ բացահայտ բանակցային դիրքեր, ռազմավարություն եւ օրինական ներկայացուցչական մարմին ունենա: Որպեսզի սկսվի Ճանապարհային քարտեզի իրականացման փուլը , մենք պետք է համահայկական կառույց ստեղծենք սփյուռքում, որը ներկայացնում է ամենայն հայոց ընդհանուր ձգտումը: Մենք նաեւ պետք է զարգացնենք մարդկային ու ֆինանսական ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են Ճանապարհային քարտեզում նշված նպատակների իրականացմանը հետամուտ լինելու համար: Որպես մեկնարկ անհրաժեշտ է, որ վերանայված, բաց մտածողություն դրսևորվի բոլոր քաղաքական, կրոնական եւ այլ ազգային հաստատությունների կողմից, իսկ նման կառույցը իրականություն դարձնելը մեր առաջնորդների առջև դրված անհապաղ իրականացման ենթակա խնդիր է:
Սփյուռքի այս կառույցին հետագայում կհետևի ողջ հայ ժողովրդին (Սփյուռք և Հայաստանի Հանրապետություն) ներկայացնող իրավական մարմնի ձեւավորումը:

Վերը նշված երկու նախապայմանները անչափ կօգնեն <u>առավել իրավական կողմնորոշմամբ դատական հետապնդման իրավունք շնորհող ճանապարհային քարտեզի իրականացմանը:</u> Այս առումով, պետք է շեշտել հետեւյալ կետերը:

1. Հայոց ցեղասպանության ողջ դատական փաթեթը, եթե այն պետք է ներկայացվի միջազգային դատական ատյաններին, պահանջում է մասնագիտական նախապատրաստում: Ամենակարևորն այն է, որ մենք կատարենք մեր տնային աշխատանքը, իսկ մեր գործը պաշտոնապես ներկայացնելուց առաջ հարկավոր է նախ գնահատել Ցեղասպանության պահանջի միջազգայնորեն ընդունելի <u>իրավական ուժը</u>: Դրան զուգահեռ, առանձին վերլուծություն է հարկավոր ներկայացնել ներկայիս հայ - թուրքական սահմանների օրինականության վերաբերյալ: Այս իրավաբանական խորհրդատվական կարծիքները հայ ժողովրդի ներկայացուցիչներին պետք է ներկայացվեն Միջազգային իրավունքի հարգված իրավաբանների եւ ամենալավ, հեղինակավոր հմուտ փաստաբանների կողմից, որոնք լիազորված կլինեն հայ ժողովրդի կողմից հատուկ այս նպատակով: Ենթադրվում է,որ իրավաբանների աշխատանքային խմբերի անդամների մեծ մասը կլինեն այլազգի, սակայն որոշները պետք է լինեն հայ, իսկ ոմանք էլ՝ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչներ:

2. Հաջորդ առաջնահերթությունը վերաբերում է միջազգային դատարանի ընտրությանը, թե հատկապես որ դատարանը առավել ձեռնտու կլինի մեր հայցը շահելու տեսանկյունից: Վերը նշված իրավաբանների և փաստաբանների աշխատանքային խմբերի հետ խորհրդակցությունը կարևոր է արդարադատության ամենահամապատասխան միջազգային դատարանը ընտրելու եւ Ցեղասպանության հարցի վերաբերյալ իրավական կարծիք պահանջելու գործընթացը սկսելու համար:

3. Փոխհատուցումը Ցեղասպանության ճանաչման հետապնդման բաղադրիչ մաս դարձնելը խաղի կանոնների փոփոխություն չէ: **Առգրավված հայապատկան գույքի մանրամասն գրանցումը և Ցեղասպանության բոլոր կորուստների հիմնավոր գնահատումը անհրաժեշտություն է:** Ցեղասպանության զոհերին (կամ նրանց ժառանգներին) պատշաճ կերպով փոխհատուցելու համար անհրաժեշտ է ունենալ հիմնավոր փաստաթղթային փաթեթ եւ ակտուարական վերլուծություն: Գիտնականները սկսել են այս աշխատանքը, եւ, ըստ էության, պրոֆեսոր Գեւորգյանը նախաձեռնել է Ցեղասպանության ընթացքի մանրամասն եւ մանրակրկիտ հաշվառումը: Սակայն անհրաժեշտ է խորհրդատվություն ստանալ Մարդու իրավունքների միջազգային և Միջազգային մարդասիրական իրավունքի մասնագետներից և նրանց վարձել հենց այդ նպատակով: Ինչ վերաբերում է ֆինանսական փոխհատուցման իրավունքին, ապա այստեղ, գիտական հետազոտություններից զատ, անհրաժեշտ է իրավական մասնագիտական հաշվապահության ներդրում:

4. **ֆինանսավորման առաջնահերթությունը**: Ցանկալի արդյունքի հասնելու նպատակով մեր ֆինանսավորման առաջնահերթությունները եւ ջանքերը որպես հայ ազգ ու ժողովուրդ, պետք է ուղղված լինեն դեպի Ցեղասպանության դատաիրավական առաջնահերթություն: Այդ ջանքերը պետք է լինեն համահայկական եւ շուտով պետք է սկսվեն:

5. Ընթացիկ քաղաքական ճնշում - Միայն իրավական կարծիքները, եթե նույնիսկ դրանք ստացվել են միջազգային դատարաններից, բավարար չեն, որպեսզի Թուրքիան հետևի դրանց: Դրական դատավճիռը կարևոր է, սակայն բավարար չէ կատարման համար: Դատական օրենքները պետք է ընդունվեն եւ վավերացվեն օրենսդիր մարմինների կողմից: Ահա թե ինչու է այդքան կարևոր, որ Թուրքիայի վրա քաղաքական ճնշում գործադրվի ոչ միայն հայերի կողմից, այլ նաև գերիզոր ազգերի կողմից: Նման առանցքային երկրներում հայկական ազգային շահերին համահունչ ազգային շահ և արտաքին քաղաքականություն ստեղծելու շարունակական ջանքերը պետք է մեր դատական օրակարգի հետ ձեռք ձեռքի տված առաջ գնան:

Վերջ